

ՄԱՅՐ ԱԹՈՂ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ ՍՏԱՑԱԾ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

«ՀԱՄԱՊԱՏՈՒՄ»

Ձեռք ափետառնեցին պարունակությունը շարանյունակով և համաձայնեցին և բացատրեցին պատմված։ Պարզաբանեց Մադախա արհեստագույն Օրմանյան, նախկին պատրիարհ։

(Տպարան Կարողիկոսության Հայոց Կիլիկիո, Անթիպաս, Լիբանան, 1953 թ., 1104 էջ)

Օրմանյան սրբազանի հանրածանոթ այս գիրքը, որը լավագույն ձեռնարկն է հայ հոգևորականության և եկեղեցական հասարակության համար և միակը Ամենարանի փրկարար պատգամները հասակորեն հայ հոգևորական հասցնելու գործում, հրատարակվել է նորից, շնորհիվ ամերիկացի Կյուրճյան եղբայրների նյութական օժանդակության, Կիրակնօրյա վարժարանների նախկին տնօրեն պարոն Լևոն Զեյնյանի եռանդուն գործունեության և Անթիպասի Կաթողիկոսարանի տպարանի աշխատողների անդուլ ջանքերի։

Հատորը նվիրված է Կյուրճյան եղբայրների հանդույժ մոր՝ Օվսանյան Կյուրճյանի հիշատակին։

Գիրքը կազմված է խնամքով։ Առաջին էջում տեղավորված է Մադախա արքեպիսկոպոս Օրմանյանի նկարը։ «Համապատում» այս նոր հրատարակության առթիվ Կաթողիկոսական տեղապահ Խաչ արքեպիսկոպոսի համառոտ նախաբանից հետո, տեղավորված է Թյուրքիո հայոց Պատրիարք Գարեգին արքեպիսկոպոսի համառոտ առաջաբանը։ Սրբազանը գրում է աշխատանքի մեծ ու կենսարար ազդեցություն մասին, որ ունեցել է Օրմանյան սրբազանի գործը («Համապատում») Հայ սերունդների դաստիարակման գործում։ «Այս գիրքը տեղ պետք է ունենա, — գրում է նա, — ամեն հայ տունն ներս և բոլոր գիրքերն վեր, ոչ միայն իրեն զարդ անդողպտելի, այլ նաև ու մանավանդ որպես ներշնչարան հոգեպարար խոհեմ ու կենցաղական կրոնազգած մարդու զգացումներում...»

Հատորի վերջում տեղավորված են բազմաթիվ ցույցակներ, որոնք ամեն կերպ դյուրացնում են «Համապատում» օգտվելու կարգը, բացատրում են համառոտագրությունները և այլն։ Գրքի վերջում տեղավորված են տեղանունների և անձնանունների ցանկերը։

* Մայր Աթոռ Ս. Էջմիածնում վերջերս արտասահմանից ստացվել են բազմաթիվ հայերեն հրատարակություններ։ Անհրաժեշտ են համարում մեր ընթերցողներին ծանոթացնել այդ հրատարակություններից նորագույնների՝ 1953 թվականից հետո տպագրվածների հետ։ — ԽՄԲ.:

«ԱՄԻՏԱՅԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐՈՒ
ՎԵՐԱԿՈՉՈՒՄ»

Բ. ՀԱՍՈՐ

Տ Ի Գ Ր Ա Ն Մ Կ Ո Ւ Ն Կ

(Ուիենգրեն, Նյու-Ջերսի, Միացյալ Նահանգներ
Ամերիկայի, Ի ԺԴ հոգի Ռեյ, սեպտեմբեր 24,
1953 թ., 413 էջ)

Հարգո հեղինակի կազմած այս հատորը իր մեջ ամփոփում է Ամիտայի (Տիգրանակերտի) կյանքի և բաղադրական հասարակական անցուղարձերի վերաբերյալ զանազան նյութեր։ Գիրքը սկսվում է Ամիտայի տնտեսական վիճակի նկարագրությամբ, բնութագրվում են այն արհեստները, որ տարածված են եղել այդ շրջանում, ապա հեղինակը Ամիտայի կրթական վիճակի մասին տալիս է մի քանի տեղեկություններ։

Շարունակության մեջ բավականին տեղ է հատկացված Սամվել Հ. Զորյանի հուշերին, այդ հուշերը ականատեսի լավագույն նոթերն ու հիշողություններն են թյուրքական բունկալ իշխանության վարած դաժան հալածիչ քաղաքականության։

Հուշերին վերաբերյալ գլխում, «Ասորի հայրենակիցներու կյանքին» խորագրի տակ, տեղեկություններ են տրված ասորիների, որպես հայերի բախտակից քրիստոնյա ժողովուրդի, ծանր վիճակի մասին սուլթանական թյուրքիայի դաժան տեժմի տակ։

«Ներգաղթական կուսակցություններն Ամիտայի մեջ» խորագրի տակ նկարագրվում է բունկալ տեժմի տակ հեծող հայ ժողովուրդի ընդլզման կազմակերպման գործում հանդես եկող հայկական կուսակցությունների ծավալած պայքարն ու գործելակերպը։

«Տեղահանություն, — ականատեսի պատմվածք» — խորագրի տակ հեղինակը ամենաարտազգեցիկ դույներով նկարագրում է մղձավանջային օրերի սոսկալի դնպքերը, ինչպես և հայ եղևուհի հրաշքով ազատված մի շարք ականատեսների սարսափելի պատմությունները։

«Վերջաբան» — Ամփոփումն է հատորի, բայց փնչպես հեղինակն է ասում, եղևուհի օրերի այդ պատմվածքները անվերջանալի են, անհատնում։ «Աննկարարելի այս աղետն քաղաքակիրթ ազգաց պատմության մեջ նմանը չունի», — գրում է հեղինակը և եղևուհի նում՝ «Վեզերու ամենն թշվառն ու ամենն եղևուհին, լքված ամենքն, միմիայն ուսական հզորագույն զորության տակ կենդանության ջոճ կառն...»

413 էջից բաղկացած Տիգրան Մկունդի կազմած այս գնահատելի գործը կազմված է վերին աստիճանի խնամքով, լավորակ թղթի վրա։ Հատորում կան բազմաթիվ նկարներ Տիգրանակերտի կյանքից, ինչպես նաև դիմանկարներ ազգային-հասարակական գործիչների և տիուր, սրտամեղիկ, սարսափազգեցիկ պատկերներ հայկական կոտորածների շրջանից։

«Ամխոսայի արձագանքներում վերադարձում» գրքի Բ. հատորում հեղինակը իրավացիորեն զետեղել է իր վերահիշյալ նույնանուն աշխատության Ա. հատորի վերաբերյալ Սփյուռքի հայ մամուլում (ամսաթերթեր, օրաթերթեր) լույս տեսած գրախոսականները, որոնք բոլորն էլ անխափր դրվատում են հարգու հեղինակի շնորհալի երկասիրությունը:

«ՀԱՅՐԵՆԻ ԱՊՐՈՒՄՆԵՐ»

(Հրատարակություն Հայ ուսուցչական միության,
Բեյրութ, 1954 թ.)

Պատկերազարդ աշուժ է սույն հրատարակությունը: Բովանդակում է երջանկահիշատակ Տ. Տ. Գեորգ Զ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի թաղման և հուղարկավորման տեսարաններն ու նկարագրությունները, ինչպես նաև հայրենի երկրի (Սովետական Հայաստանի) բնական գեղեցկությունները, շինարարությունը, պատմական կոթողները, դիտության, արվեստի և մշակույթի խոյանքները, իրանանից մեկնած պատվիրակության ակնհաստես վիճակություններով և հաջողված գեղեցիկ նկարներով:

Ժողովածուի առաջին էջում տեղավորված է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսական տեղապահ գերաշնորհ Տ. Խաչ արքեպիսկոպոս Աջապահյանի շնորհակալական խոսքը ուղղված Ուսուցչական միությանը՝ վերահիշյալ օգտակար գործի գաղափարը հղանալու և խրադործելու համար:

Ժողովածուի նկարները տրամադրված են երջանկահիշատակ Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսի թաղման առթիվ իրանանից մեկնած պատվիրակության կողմից: Կիլիկիայի պատրաստությունը՝ «Ցիկկոգրաֆ Տիտո», տպագրությունը՝ (տպարան «Շիրակ», տպաքանակը՝ 2.000 օրինակ):

«ԾԱՂԿՅԱ ՓՈՒՆՁ»

Պատմություններ, պատկերներ, առակներ:

ԱՐՓԻԱՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

(«Նոր օր» տպարան, Ֆեզեն, 1954 թ., 237 էջ)

Հարգու հեղինակը իր հրատարակած գրքի առաջաքանում այդպես իսկ բնորոշում է այն:

Գիրքը պարունակում է իր իսկ հեղինակի կյանքի 50 տարիների ընթացքում կուտակված գործնական օրբարոյական դասերը և իր կյանքի հարուստ փորձը, փնչպես և իր հորից և օրիշներից լսած պատմությունները, իր կյանքի հուշերը, տպավորությունները, հանդիպումները:

Հեղինակը գիրք գրելու հավակնություն չի ունեցել և այս նրա առաջին փորձն է, մի համեստ գրքի ու մտքի գործ, որը խրախուսելի է:

Գրքի վերջում տեղավորված են հեղինակի շափածո բանաստեղծությունները և իր անձնական կյանքին վերաբերող նկարներ:

«ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԲԵՄԸ»

ԱՐՄԵՆԱԿ ԳՐԱՃՅԱՆ (Ա. ՄԱՆԿԱՍՏԵՐ)
(Բեյրութ, 1954 թ., 327 էջ)

Հեղինակը ձեռնարկել է մի գծավորին և պատասխանատու աշխատանքի՝ տալ մանուկներին հաճելի մի գրական երկ, մղվելով մանկական գրականության այնքան անհրաժեշտ պահանջից: Ներկա հատորի մեջ նկատվում են մի քանի մշակված և մասնավորապես բնի համար, որպես մանկական թատերգություններ: Բավական տեղ է հատկացված նաև շափածո ստեղծագործություններին, որոնցից շատերը ձայնագրված են ելույթական ձևերով: Մանկական այս հատորի նյութերը ըստ իրենց բնականորեն բաժանված են հետևյալ կարգի՝ ամենօրյա և Ս. Մենդյան, հայրենասիրության, զարնան և բնության զարթոնքի, ծնողական սիրտ և դպրոցական կյանքի վերաբերյալ:

Գրքի վերջում տեղավորված են դանդաղ նյութեր վերջրած մանուկների առօրյա կյանքից և կենցաղից: Գիրքը պատկերազարդ է և վաղմված է խնամքով:

«Հ Ա Յ Կ Ե Դ Ր Ո Ն»

ՏԱՐԵՑՈՒՅՑ, 1955

(Խմբագրեց Հարություն վարդապետ Մուշյան,
Գ տարի, 334 էջ)

«Հ ու չ ա ռ ն ա ն.— Տ ա ռ ե ց ու յ յ ց ի ա այս երոգը բիվը սիրով կնվիրեմ 1915-ի կոտորածին զոնվող մեկ միլիոն նահատակներին՝ անոնց մահվան ֆառաճամյակը հավերժացնելու մխիթարությամբ»:

Գիրքը կազմված է տարեցույցների հայտնի հեղինակ Թեոդիկի հետևողությամբ: Կազմող հեղինակը զնահատելի աշխատանք է կատարել, այն կարողացել է ափսոսանքալից և ներկայացնել գեղեցիկ, գեղարվեստական ներույթամբ օժտված մի ժողովածու:

Տարեցույցում տեղ են գտել փնչպես սփյուռքահայ գրողներին, այնպես և սովետահայ գրողների գովածքները (Իսահակյան, Շիրազ և արև): Տեղ է հատկացված երջանկահիշատակ Գեորգ Զ. Կաթողիկոսի կյանքին և գործունեությանը—Ձգոն ծայրագույն վարդապետի խոսած ճառը (էջ 29): Տարեցույցում ընդհանրապես տեղ են գտել ազգային-կրոնական, աշխարհագրական, պատմա-քաղաքական բնույթ կրող մի շարք հոգվածներ, պատմվածքներ և այլն, ինչպես և լեզվական, կենսաբանական նորություններ և հետաքրքիր համառոտ տեղեկություններ:

«Հայրենի վերելք» վերնագրի տակ արված են Սովետական Հայաստանի արդյունաբերության, գյուղատնտեսության, արվեստի, ճարտարապետության և շինարարության վերաբերյալ տեղեկություններ:

Տարեցույցում տեղ են գտել ընտիր ճաշակով մի շարք հետաքրքիր նկարներ Սովետական Հայաստանի տեսարժան վայրերից:

Գիրքը կազմված է ճաշակով և գեղարվեստորեն:

